ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 01-ը հունիսի 2022թ.
ժամը 15^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության պետ, գնդապետ Կ. Գրիգորյան /ԳԱՊ/,
ՀՀ ԶՈՒ ԻԶՎ ինժեներական սպառազինության բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱՎ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սիմոնյան,
Բացակայում է ՀՀ ԶՈՒ ԻԶՎ ԻՍ բաժնի ավագ սպա փոխգնդապետ Ա. Եպիշկոն:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Տերյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ
2	Ա/Ձ Սենիկ Խաչատրյան
3	«Սլացք» ՓԲԸ
4	«Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ի 1-ին, 3-րդ չափաբաժինների՝ պահեստամասերի տեխնիկական բնութագրերում նշված է «հրավերի համաձայն,.....», սակայն հրավերի պայմանագրի նախագծում աղյուսակների տեսքով ներառված տեխնիկական բնութագրերը ներկայացված չեն: Ներկայացված հայտի Հավելված N 1.1-ի 1-ին, 3-րդ չափաբաժինների՝ պահեստամասերի տեխնիկական բնութագրերը պետք է ներկայացվեն հրավերին համապատասխան լիարժեք տեսքով /աղյուսակներով/: Ներկայացված հայտի Հավելված N 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում լրացված չեն 4.7.1, 4.7.2 կետերը (իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ՝ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին և կազմակերպության նկատմամբ վերահսկողության ձևը): Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 01.06.2022թ. ծանուցել վերոնշյալ մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 4 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավորի գների հանրագումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	**Զանազան պահեստամասեր** /Ցածր արտադրողականության բույսդզերների վերանորոգման պահեստամասեր/	դրամ	1	17789260	Ա/Ձ Սենիկ Խաչատրյան	9191117.67	11029341.2	«ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ	14824383.33	17789260
								«Սլացք» ՓԲԸ	12452480	14942976
								«Կապանի մեքենաշինական գործարան» ՍՊԸ	13330000	15996000
2	**Զանազան պահեստամասեր** / Էքսկավատորի և ավտոկռունկի վերանորոգման պահեստամասեր /	դրամ	1	52201000	Ա/Ձ Սենիկ Խաչատրյան	26970516.67	32364620	«ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ	40020000	48024000
3	**Զանազան պահեստամասեր** /Ընդհանուր օգտագործման պահեստամասեր/	դրամ	1	1212200	Ա/Ձ Սենիկ Խաչատրյան	626303.33	751564	«ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ	898000	1077600
								«Կապանի մեքենաշինական գործարան» ՍՊԸ	950000	1140000

1-ին չափաբաժնի առավելագույն գինը կազմում է 15000000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի առավելագույն գինը կազմում է 16000000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի առավելագույն գինը կազմում է 13000000 ՀՀ դրամ:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Արդյունքում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված և ընտրված մասնակցի հետ կնքվելիք պայմանագրով սահմանված ընտրված մասնակցի կողմից գնային առաջարկով միավորի գների հանրագումարի տեսքով առաջարկված գինը՝ **Մ.Գ առաջին չափաբաժնով** կազմում է **11 029 341.2** ՀՀ դրամ, պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ապրանքների համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ **Ն.Գ. առաջին չափաբաժնով** հավասար է **17 789 260** ՀՀ դրամ, մասնակցի կողմից գնային առաջարկով միավորի գների հանրագումարի տեսքով առաջարկված գինը՝ **Մ.Գ երկրորդ չափաբաժնով** կազմում է **32 364 620** ՀՀ դրամ, պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ապրանքների համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ **Ն.Գ. երկրորդ չափաբաժնով** հավասար է **52 201 000** ՀՀ դրամ, մասնակցի կողմից գնային առաջարկով միավորի գների հանրագումարի տեսքով առաջարկված գինը՝ **Մ.Գ երրորդ չափաբաժնով** կազմում է **751 564** ՀՀ դրամ, պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ապրանքների համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ **Ն.Գ. երրորդ չափաբաժնով** հավասար է **1 212 200** ՀՀ դրամ:

Ուստի «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծում ներառված բանաձևի **Մ.Գ./Ն.Գ.** գործակիցը կկազմի՝ **առաջին չափաբաժնով 0,62 և երկրորդ չափաբաժնով 0,62, երրորդ չափաբաժնով 0,62:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Տերյան)

4.1 07.06.2022թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «**ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Սենիկ Խաչատրյանը և վերջինիս, անգործության ժամկետի ավարտից հետո, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Տերյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-20/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Կ. Գրիգորյան

Գնահատող Յու. Եսայան

Գնահատող Ա. Սիմոնյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան